

ների առաջ, այնքան դիւրութեամբ և այն-
քան անարժան կերպով անշքացաւ եկեղեցին,
դատարկացաւ երկիրն, և Հայոց «մեծ և հրա-
շալի աթոռը» որ դուխն էր երկրի բոլոր իշ-
խանութիւնների, գրեթէ անդառնալի տարա-
դրուեցաւ: Իւր հետ տանելով արեւելեան քրիս-
տոնեաների բաղդը և երջանկութիւնը: Երբ
այս լուսարանութիւնը մի օր կատարելապէս
տեղի ունենայ, այն ժամանակ թերեւ յայտ-
նուի, որ տէր Պետրոս Ա. ակամայ զոհ էր
ժամանակի համատարած և անբռնարարելի
չարութեան: Իսկ մինչև այդ՝ աչքի առաջ
ունենալով այն զղջումն և ապաշաւանքը, որ
միշտ և յաւիտեան լսելի են նորա երգերի
մէջ, հաւատում ենք, որ նորա յանցանքը
կընկերուի նորան: Թախտեան արդար և ողոր-
մած մեր Փրկիչը, որ մի խօսքով, մի ճշմարիտ
խոստովանութեամբ, բաց արաւ աւազակի
առաջ իւր դրախտի դռները, հաւատում ենք,
որ չպիտի խտտանայ Սեբաստիոյ շիրմից
դարեր շարունակ «յիս մարդասիրեան բաղ-
մադութ Փրկիչ» անլուռ աղաղակողին:

Կ. Կ.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐԴ. Բ. ՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ԳՊՐՈՑՈՒՄ՝*

Հատ հետի չէ մեզանից դպրոցական կեանքի
այն շրջանը, երբ կարգապահութեան գլխաւոր և
միակ միջոցն էր ծեծը, ֆալախան, թէ հասարա-
կութեան և թէ գրականութեան մէջ դրա յիշատա-
կը շատ թարմ է, բայց արեւմուտքի համար արդէն
անցեալին է պատկանում այդ:

Միջին դարերում դպրոցական կարգապահութեան
և դաստիարակութեան նշանաբանը ֆալախան է. ապ-
րել և մեծանալ ծեծի տակ հոմանիշ է արդի «Ար-
ք»:

* Քաղաւած է «Нравъ», շաբաթաթերթից, տես.
Արարատ ղեկոնմանք 1895:

թ ու թիւն ստանալ խօսքին: Ծեծից կապտած
թիկունք, արտասուքից թաց այտեր, ապտակի տակ
կծկուած մկաններ միջին դարու աշակերտի բնորոշ
գծերն են:

Հուսարական օրէնքով եթէ ուսուցիչը ձեռքով
կամ գաւազանով ծեծում է աշակերտին, բայց
բանը արեան չի հասնում, ոչինչ. իսկ երբ աշակեր-
տը ծեծի տակ արիւնլուայ է լինում կամ մեռ-
նում է, ուսուցիչը պատասխանատու է: «Երբ մեր
ուսուցիչը գինով էր լինում կամ զայրացած, պատ-
մում է Նազար Ելքերտը, քնաթաթախ ցած էր
գլորում ինձ անկողից և ոտներիցս բռնած երեսիս
վերայ քարէ էր տալիս: Քանի՜ քանի շնորհալի պա-
տանիներ, որ ապագայի մեծամեծ յոյսեր էին
տալիս, իմ աչքի առաջ կամ մոռնում էին կամ
խեղագարում:» 2-րդ տախտակների վերայ պատկել,
նուազ և վատ սնունդ, օւժից վեր աշխատանք,
ամբողջ գիշերներով անքնութիւն շատ տաղանդաւոր
պատանիների՝ հէնց դպրոց մտնելու առաջին տարին,
իջեցրել են գերեզման կամ զրկել աչքի լուսից,
խեղքից:

Անբրեւակայելի յիշողութիւն, երկաթի առող-
ջութիւն և անսովոր զօրեղ նեարդային համակարգու-
թիւն՝ անհրաժեշտ պայմաններ էին միջին դարում
գիտութիւն ձեռք բերելու համար. բայց դպրոցը ոչ
թէ կրթում զարգացնում էր յիշեալ կողմերը, այլ
անխնայ ճնշում: հաղարից մէկը հազիւ յաղթող էր
գուրս գալիս այդ կատաղի կռուի մէջ: Ըստ երե-
ւութիւն դպրոցական այդ խիստ կարգապահութեան
շնորհիւ է, որ միջին դարի գիտնականները և փի-
լոսոփաները զարգացրել են իրենց մէջ երկաթի
կամք և հզօր բնաւորութիւն: Բայց այդ հսկայա-
կան պատկերները ծածկում են մեր աչքից այն
հաղարաւոր անմեղ զոհերին, որոնք ընկել են գաւա-
զանի հարուածների տակ: Միջին դարի դպրոցը բնա-
կան ընտրութեան սկզբունքով է առաջ-
նորդուել: ոչ թէ ինքը աշխատել է յարմարուել աշա-
կերտի անհատական յատկութիւններին, այլ անխնայ
դէն է նետել կամ փշրել, ինչ որ նորա չափին չէ
եկել: այս ճանապարհով ընթացել է նա Զ. դարից
մինչև ԺԷ և մասամբ ԺԸ դարը:

Բայց այս բոլորը միջնադարեան դպրոցի ծան-
րութեան միայն մի կողմն է: Ժամանակի գիտու-
թեան ձգտող պատանին գեռ շաւո ու շաւո անցար-
մարութիւնների պիտի յաղթէր, որոնցից իւրաքան-
չիւրը յուսահատութեան մէջ կարող էր ձգել ար-
գի ուսանողին:

Վեանքի պայմանները վերին աստիճանի անյաջող
էին և պատանին գիտնական աստիճան ստանալու տեղ
յաճախ կարող էր կախաղանի արժանի լինել, կամ
քաղցածութիւնից մեռնել, կամ զանազան հի-
ւանդութեամբ փութել և լին և լին: Այս կանոնաւոր
երթակութիւն կար, ոչ այլ յարաբերութիւն, ոչ

օգնութեան համար պատրաստի ընկերութիւններ, Փարիզի համալսարանը ժամանակի լուսաւորութեան կենտրոնն էր. աշխարհի ամեն կողմից այստեղ էին ժողովում ուսումնաճարաւ պատանիներ, ով ինչպէս կարող էր, Հատերը ողորմութիւն հաւաքելով հազիւ հասնում էին Փարիզ, գրողում մի որ և է ուսուցչի ցուցակում, գտնում և մտնում իւր համերկացիների մէջ, Հեռի ծնողներից, զուրկ ամեն մի օգնութիւնից, հազիւ տարին մի երկու անգամ նամակ էին ստանում այսպէս կոչուած nuntii minores մարդկանց ձեռքով, որոնք ման էին գալիս քաղաքից քաղաք որդւոց նամակը ծնողաց և ընդհակառակը ծնողաց նամակ որդւոց էին հասցնում, նոյնպէս և աշակերտներ բերում իրենց հետ համալսարանը, Բայց հազարաւոր եկողներից շատ քեքերը գիտութեան պաշարով յետ էին դառնում այդ Բարեւոյնից (Փարիզից), Անառաջնորդ, առանց հսկողութեան ընկնում էին նոքա մոլութեանց ծովի մէջ, բոլոր փողերը ծախսում գինու ու կանանց համար, յետոյ քաղցից ստիպուած սուր կամ դաշոյն առած, գլխարկները աչքերին քաշած յարձակուում գիշերով անցորդների վերայ կողոպտում և սպանում, կամ յանձն առնում այնպիսի պաշտօնների, որ աւաղակութիւնից ու գողութիւնից բարձր չէին:

Աւելցնենք դրա վերայ և կեղտոտ խոնաւ բռնակարան, դարշահոտ ու աղբով լի փողոցներ, ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւն, ցուրտ ու քաղց և կատարեալ անօգնութիւն, և հասկանալի կլինի, թէ որքան ծանր էին միջնադարեան դպրոցական պայմանները, Բայց դարձեալ պակասաւոր կլինէին մեր տեղեկութիւնները միջին դարի դպրոցական կեանքի վերաբերմամբ, եթէ չլիշենք թափառական անհերի կարգը:

Թափառականների կարգը, կամ ինչպէս Եւրոպայում կոչուում էր Ordo Vagorum, այլ և Գոլիականների կարգ, Գոլիի եպիսկոպոսի անունով, որ դոցա անտեսանելի առաջնորդն էր համարուում՝ իւր ծաղկած շրջանում լատին տրուբադուրներ էր կազմած, որոնք իբրեւ երգիչ կամ դերասան ընդունուում էին եպիսկոպոսների պալատներում և հէնց եկեղեցականների առաջ ծաղրում՝ նրանց լատիներէն ոտանաւորներով: Յետոյ դոքա դառնում են ժողովրդական երգիչներ, դեղ անողներ, հմայողներ և ի վերջոյ թափառող ուսուցիչներ, ԺԳ դարում դրանք տարածուում են ամբողջ Գաղղիայում, Անգղիայում, Գերմանիայում և կոչուում են բակխանտներ— դպրոցներին աշակերտ մատակարարող ուսուցիչներ, Բակխանտը առած իւր աշակերտին թափառում է երկրէ երկիր, աշակերտին աւելի յարմար մի դրպրոցում տեղաւորելու գիտաւորութեամբ, բայց իսկապէս նրան սիրելի է այդ կեանքը, Նա ապրում էր իւր աշակերտի հաւաքած ողորմութեամբ և այնքան ընտելանում էր, որ չէր կարող մի տեղ մը

նալ ու ծառայել ամենաձեռնտու պայմաններում անգամ:

Խեղճ ծնողները արտասուքն աչքերին բաժանուում են իրենց զաւակներից, յանձնում Բակխանտին, յուսալով՝ որ որդին մի ժամանակ մարդ պիտի դառնայ, բայց թափառականը ման է ածում խեղճ մանկան քաղաքից քաղաք, ցրտին, ցեխին, անտանելի եղանակներին աշակերտը պարտական է իւր ուսուցչի համար ողորմութիւն խնդրել, ամեն տեսակ նեղութիւն քաշել, իսկ գիշերը ցրտից ու ծեծի երկիւղից անանկողին ու քաղցած ճանճի պէս կպչել մի անկիւնում պատին, և գիշերը մի կերպ լուսացնել, Յաջորդ օրը դարձեալ նոյն մուրացկանութիւնը, նոյն ծեծը, նոյն թափառական կեանքը...

Բայց այդ ուսուցիչներից շատերը ստիպուած են թափառում, որովհետեւ դպրոցական վարձատրութիւնը շատ չնչին բան է: Ի՞նչ ենք ստանում մենք մեր աշխատանքի փոխարէն, գրում է Էօբան Հասսը.— քաղցած կեանք, ամեն տեսակ անախորժութիւն, ուժերի վատնում, հիւանդութիւն, անվերջ վիշտ, Ամեն մի այլ աշխատանք տալիս է մարդուն ապրելու միջոց, իսկ դպրոցի ուսուցիչը քաշ է տալիս իւր օրերը սարսափելի աղքատութեան մէջ՝ չըջապատող հասարակութեան հպարտութիւնը նորան ցեխի է հաւասարեցնում, Յետին գրագիրը, տիրացուն, թափառական կրօնաւորը նայում է նորա վերայ բարձրից. ո՛չ, մահը սրանից լաւ է:

Բազմադարեան այդ յամառ կռիւը պսակուեց յաղթութեամբ. Եւրոպացին յաղթեց միջին դարի դպրոցական կարգերին, Գիտնականը նեղ շաւղով անցաւ ինկվիզիցիայի խարդիկների վերայից և հասաւ ճշմարիտ գիտութեան, Ազատ հետազոտութեան և մարդասիրութեան ոգին, յաղթանակ յաղթանակի վերայ տանելով, վերջապէս ներկայ կուտուրայի հոյակապ շինութիւնը կանգնեց մեր առաջ:

Եւ մենք՝ որ դեռ երէկ կուացնում էինք մեր մէջքը դաւաղանի հարուածների տակ, այսօր անցած ենք համարում ամեն բան անդարձ, և ձրի քաղում ենք արեւմուտքի արիւնով գնած յաղթութեան պտուղը, Գեկարտին, Կանտին, Սպինոզային և այլ երեւելի իմաստասէրներին նոյն չափով իւրն է համարում կրթութեան արեւելցին, որչափ և արեւմուտքցին, Սակայն կեանքի յառաջագիմութեան գործում վերջինս անհամեմատ առաջ է. կեանքի երկար ու յամառ կռիւը միւսը ու ամիացրել է նորա միտքը և կամքը, Ոչ նորա նախաձեռնող ոգին գործնական կեանքում և ոչ այն անդուլ աշխատասիրութիւնն ու եռանդը գիտութեան այս կամ այն ճիւղի մէջ արեւելցին դեռ չէ կարող իւրացնել, Մինչև այժմ մենք գերադասում ենք առնել, թարգմանել և իւրացնել ամեն բան պատրաստի, իսկ ինքնուրոյն աշխատանքը մեզ համար դեռ բեռն է: Բայց հարկաւ պատմութիւնը թոյլ չի տալ մեզ ծուլանալ, Կեանք

քը գնալով նոր նոր պահանջներ է յառաջացնում, և պահանջում է ինքնուրոյն ստեղծագործութիւն. բայց ինքնուրոյն ստեղծագործելու համար հարկաւոր է և անկախ մտածել. Ահա այս անկախ մտածելու ընդունակութիւնը ձեռք է բերել արևմուտքցիները հիւսիս միջին դարերի գաղութական վերդիշեալ ծանր պայմանների, նորա ուղեղը շորս դար դարգացել է կրօնաւորների վեճերով, հումանիստների դասական կրթութեամբ զօրացել, վերանորոգիչների բանակութիւններով հասունացել. Միտքը սրուել էր սքոլաստիկների գաղաղութիւն և մարդկային գիտութեանց վերանորոգութեան շրջանում նա մի ձկուն, հնազանդ զէնք դառաւ մեծ փիլիսոփաների ձեռքին:

Ս. Թ.

Ս. Ա. Ն. Տ. Ա. Ս. Տ. Ի

ՍՊԱՆՈՒՆԱՅԱԼՈՒ ՎՏԱՆԳԸ.

Քաղաքակիրթ աշխարհին զբաղեցնող օրուայ խնդիրներից մէկն է այն երկիւղը, թէ մի գուցէ նեղկաստանում իբրեւ սովի հետեանք յայտնուած է այժմ գրեթէ ամբողջ երկիրը ճարակող ժանտախտը հետզհետէ տարածուի և մուտք գործէ Եւրոպայ. Պետութիւններն այդ պատճառով սկսել են արդէն ուշադրութիւն դարձնել և երեւի շուտով լուրջ միջոցների կձեռնարկեն, փտանդի առաջն առնելու:

С. Петерб. Вѣдомости թերթն իւր № 15 առաջնորդող յօդուածով ցոյց է տալիս, թէ որչափ անբաւարար են այդ միջոցները և որչափ մեծ կարիք կայ ընդհանուր ժողովրդական շարժմամբ վերացնելու մէջտեղից այն նպաստաւոր հանգամանքները, որոնցով սնունդ է գտնում համաճարակը. խնդիրն այն է, ասուած է այստեղ, որ շատ պատճառներով կարելի չէ դրականապէս արգելել այդ ակտն անցնելու սահմանագծերից, Բաւական է միայն յիշել, թէ ինչպիսի հեշտութեամբ սահմաններում մի կողմից միւս կողմն են անցնում այժմ մաքսանենգները, որպէս զի հասկանալք, թէ ինչ կլինի, երբ հարիւր հազարաւոր մարդիկ կաշխատեն օրէնքը ոտնակոխ անել, ոչ թէ մի քանի բուրլի աշխատանքի համար, այլ ընդհանուր սարսափի ազդեցութեան ներքո՝ չվարակուած տեղեր խոյս տալով շտապաւ, իրենց կեանքը փրկելու. Իսկ ինչպիսի հեշտութեամբ տարածուում է ակտը թռչունների, միջատների և վերջապէս հասարակ փոշու միջոցաւ, որի ամպերը, ինչպէս յայտնի է, Միջին Ասիայում ուր ամառն անձրեւ չի գալիս, հարիւրաւոր վերստեր են անցնում. Բարեբաղդաբար առհասարակ բոլոր համաճարակները, և մասնաւորապէս

ժանտախտը, որոշ յաջող պայմաններ են պահանջում տարածուելու համար և երբ այդ պայմանները վերացուած են՝ լրջօրէն կուեւել կարելի է նոցա դէմ. Ահա այդ մասին պէտք է մտածել այժմ, երբ ժամանակ կայ դեռ ամենաեռանդուն միջոցներ ձեռք առնելու. — Պատմական փորձը վաղուց ի վեր հաստատել է, որ ժանտախտը միմիայն այն ժամանակ սպառնական ճարակող բնաւորութիւն է ստացել, երբ բուն է գրել սովի և ուրիշ ամեն տեսակ զրկանքների պատճառաւ նուազած բնակչութեան մէջ, ուստի և ընդարձակ կերպով տարածուել է հացը պակաս եղած տարիներում կամ աւերիչ պատերազմներից յետոյ. Բայց երբ համաճարակով բռնուել է հարուստ և կուշտ բնակիչներ ունեցող մի երկիր, արագութեամբ թուլացել է նա և վերջացել, առանց մեծ աւերածներ պատճառելու:

Յատկապէս Պովկասի համար, ուր բացի տեղացի աղքատներից իւրաքանչիւր տարի բազմաթիւ խեղճ պանդուխտներ են գիմում Պարսկաստանից և ուր այժմ այնչափ շատ կան ապրուստի բոլոր միջոցներից զուրկ տաճկահայ գաղթականներ՝ ամենագործնական միջոց համարում է յիշեալ թերթը հաստատուն պարտադիր գներն զնել հացի վրայ, որպէս զի թանգութեան առաջն առնուի՝ արգելելով նաև կարեւոր դէպքում պանդուխտների մուտքը. — Ինչ մեղ է վերաբերում, հրաւիրելով մեր ազգայիններին ուշադրութեան առնելու նորա ողջամիտ խորհրդածութիւնները, մենք ամենից աւելի յոյս ունինք ժողովուրդի քրիստոնէական առատաձեռնութեան վերայ. Հազարաւոր թշուառ եղբայրակիցներին այս դառն ձմեռնային օրերում իւր աղքատիկ միջոցներով կերակրող և պատսպարող հայ ժողովուրդը պէտք է չգաղարէ անշուշտ վեհանձն մարդասիրութեան գեղեցիկ օրինակներ ընծայելու նաև այն ժամանակ, երբ ընդհանուր օգուտն այդ պահանջէ. Գարնան ջերմագին օրերի հետ աշխատանքի գուռ կբացուի անշուշտ պանդուխտներից շատերի համար, որոնք, յուսով ենք, կդժուարանան այլևս երկար ժամանակ ծանր բեռն լինելու իրենց հիւրընկալների համար և ջանք չեն խնայի սեփական քրտինքով հաց հայթալթելու. սակայն հարկաւոր է, որ նաև վերջիններս մի անգամից չզաղաթեցնեն իրենց զթասիրութիւնը, այլ շարունակեն զիջողաբար և հոգատար քնքշութեամբ վերաբերուել հալածական և չարատանջ հիւրերի հետ. հարկաւոր է, որ ամէնքը զինուորորդին պարկեշտ ջանասիրութեան եռանդով, սեփական և ընդհանուր օգտի համար ձեռնառու լինին միմեանց և աշխատեն այդպէս, ընկերական ընդհանուր ոյժերով՝ որչափ կարելի է առատ բաժին ձեռք բերել երկնքի օրհնութիւնից, որպէս զի նորանով ճոխացած յաջողութեամբ դէմ դնեն յիրաւի ապագայ չարիքներին. թէպէտ մեծ է մեր յոյսը, որ Ամենազորմն